զեւ հնար կատարել զխնդիր Սէրվիչէնի՝ եւ տղա դարձան 'ի տեղիս իւրեանց։

Այլ յետ ոչ բազում աւուրց վախճանեցաւ Յովհաննէս Պատրիարք՝ հարեալ 'ի կաթուածէ (1860· Դեկտեմբեր 23), 'ի տօնի Դաւթի մարգարէի և Յակոբայ առաքելոյն կատարեցաւ տխուր հանդէսն յուղարկաւորութեան ամենայն շքեղութեամբ, եւ թաղեցաւ 'ի վանս Ս· Փրկչի 'ի կարգս առաջին Պատրիարքաց։ Եւ ժողովեալ միաբանաց գրեցին զամենայն հանգամանս գործոյն 'ի Կոստանդինուպօլիս յազգային Պատրիարքարանն եւ առ Փոխանորդն Սահակ վարդապետ։ Սա 'ի կենդանութեան իւրում շինեաց զփառաւոր Պատրիարքարանն, գնեաց զայգին 'ի վերայ Փիլիպպոսի աղբեր, զոր Արաբացիք կոչեն Հանէէ, մերձ 'ի գիւղն Վէլէճէ։ Գնեաց նաեւ արտաքոյ քաղաքին Երուսաղէմի արտորայս առ 'ի կառուցանել շինուածս, յորոց 'ի վերայ միոյ մասին կառոյց շինուածս ինչ մեծ նեղութեամբ և դժուարութեամբ, ստացաւ նաեւ զմեծամեծ տունս 'ի մէջ քաղաքին 'ի կալուած, 'ի հիմանէ կառոյց զփառաւոր Ուսումնարանն գմբեթարդ մերձ 'ի Զամ Բաղն, զոր ինքն եդ կառուցանել· և այսպէս լի արդեամբ և ազգաշէն բարեգործութեամբ վախճանեաց զկեանս իւր վըշտացեալ 'ի դաւանաց և 'ի նենգութեանց ընտանի նախանձաւորաց իւրոց, որոյ յիշատակն եղիցի օրհնութեամբ։

Յետ վախճանելոյ Յովհաննու Պատրիարքի միաբանք վանաց խոկային կացուցանել զոմն 'ի միաբանացն վանաց յԱթոռ Պատրիարքութեան ըստ առաջին կարգի և սովորութեան Աթոռոյն· և զի 'ի սմին ժամանակի բաց յԱւագ Լուսարար Գէորգ Եպիսկոպոսէ չէր այլ ոք Եպիսկոպոս յԱթոռն, նա եկաց յայնժամ Գլուխ միաբանութեան եւ զնա յօժարեցուցանէին լինել Պատրիարք· սակայն փութով եհաս օրհաս նմին, վախճանեցաւ եւ 'ի նմին աւուր Մկրտիչ վարդապետ Դարպասընկալ։ Գէորգ Եպիսկոպոս Աւագ Լուսարար Տէր Յարութիւնեան Ռոմանցի 'ի տոհմէ Թաթարեանց, այր զգօն կրօնասէր եւ զգուշաւոր 'ի բանս, կարգեալ 'ի պաշտօն Լուսարարութեան (1849· Ապրիլ 9)· վախճանեցաւ (1861· Յունվար 6)։

Եւ զկնի այսր կարգեցին ընտրանօք Տեղակալ զՎրթա-